ՀԱՅԵՐԻ ՄԻ ՆՈՐ ԽՄԲԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՍԻՐԻԱՅԻՑ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԵՅՐՈՒԹ, 28 սեպտեմբերի (ՏԱՍՍ).— Սեպտեմբերի 27-ին Սիրիայից և Լիբանանից մշտական բնակության համար Սովետական Հայաստան են մեկնել 6.000 հայեր։ Բեյրութի նավահանգստում մեկնողներին ճանապարհ էին դնում ավելի քան 20 հազար մարդ։ Հրաժեշտի այցելության համար շոգենավ էր ժամանել Մերձավոր Արևելքի հայ եկեղեցու ղեկավար Դարեգին առաջին կաթողիկոսը։ Ուղևորման համար ժամանել էր նաև Լիբանանում ու Սիրիայում սովետական դեսպանորդ ընկ. Սոլոդը։

Տեղական ժամանակով ժամը 18-ին սովետական «Ռոսսիա» շոգենավը հարյուրավոր նավակների ուղեկցությամբ Սովետական Հայաստանի հիմնի հնչյունների ներքո մեկնեց Բեյրութի նավահանգստից։